Անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրությանը՝ Դատարանն արձանագրում է, որ «Ավետիսյան Լեգալ Քոնսալթինգ» ՍՊ ընկերության (Կատարող) և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության միջև (Պատվիրատու) 2024թ. սեպտեմբերի 20-ին կնքվել է Հանձնարարության թիվ 15/24 պայմանագիրը, որի 1.1 և 3.1 կետերի համաձայն՝ սույն պայմանագրով, հանձնակատարը պարտավորվում է հանձնարարողի անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, իսկ սույն հանձնարարության կատարման համար Հանձնարարողը Հանձնակատարին պարտավորվում է վճարել 300,000.00 ՀՀ դրամ:

Տվյալ պարագայում ներկայացվել է հայց՝ թիվ «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-24/20» ծածկագրով պայմանագրի 28.08.2024թ. միակողմանի լուծումը և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ 02.09.2024թ. թիվ 201 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որը ենթակա է բավարարման, գործը քննվել է գրավոր ընթացակարգով, որպիսի պայմաններում Դատարանը եզրահանգում է, որ սույն գործով որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 100,000.00 ՀՀ դրամը, հետևաբար՝ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲ ընկերության՝ թիվ «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-24/20» ծածկագրով պայմանագրի 28.08.2024թ. միակողմանի լուծումը և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ 02.09.2024թ. թիվ 201 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2024թ. հուլիսի 8-ին կնքված թիվ «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-24/20» ծածկագրով մատակարարման պայմանագրի «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲ ընկերության կողմից 2024թ. օգոստոսի 28-ի միակողմանի լուծումը:

Անվավեր ճանաչել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲ ընկերության 2024թ. սեպտեմբերի

2-ի թիվ 201 որոշումը:

«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲ ընկերությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ պետական բյուջեից «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը վերադարձնել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am